ԳՐԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Գուրգենի Մելիքյանի

«ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ»

թեմայով ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Այսօր օտար լեզվի ուսումնառության հոգեբանական հիմնախնդիրը բավականին տարածված ու համեմատաբար նոր երևույթ է գիտության մեջ, և հետաքրքրական է, որ այն քննարկման բուռն ալիք է բարձրացրել ոչ միայն լեզվաբանության ու հոգեբանության, այլ նաև սոցիոլեզվաբանության, հոգելեզվաբանության, նյարդաբանության, կրթության ու այլ բնագավառներում:

Օտար լեզվի հիմնախնդիրների վերաբերյալ տեսություններն ու հետազոտությունները, անշուշտ, շատ կարևոր են ուսումնական գործընթացներում սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների դիտարկման համար: Նմանապես լեզվի մետաճանաչողական կողմը բավականին ուսումնասիրված թեմա է... Սակայն օտար լեզվի արդյունավետ ուսումնառության հիմքում ընկած սոցիալհոգեբանական բաղադրիչներն ու գործոնները դեռևս լուրջ ուսումնասիրման կարիք ունեն: Ավելին՝ օտար լեզվի յուրացման գործընթացում սոցիալ-հոգեբանական խնդիրների լուծման անհրաժեշտությունն այնքան ցայտուն է, որ կարող է անգամ օտար լեզվի դասավանդման մեթոդաբանության մեջ առանցքային տեղ զբաղեցնել:

Ատենախոսը հոգեբանին հարիր նրբանկատությամբ հուշում է, որ օտար լեզվի տիրապետելու համար սովորողը պետք է դուրս գա ուսման զուտ ճանաչողական տեսության նեղ շրջանակներից ու ավելի շատ կենտրոնանա սեփական հակումների ու կարիքների վրա: Աշխատանքում բոլոր ակնարկներն արդարացիորեն ուղղված են արդի իրողությունների հետ հաշվի նստելու հրամայականին՝ նորովի կառուցելու օտար լեզվի սոցիալ-կրթական մոդելը, թարմացնելու օտար լեզվի ուսուցման

ընթացքում սոցիալ-հոգեբանական պահանջները և մշակել օտար լեզվի ուսումնառության նոր մեթոդաբանություն:

Ատենախոսը մանրամասնորեն ներկայացրել է հիմնախնդրի պատմա-մշակութային և սոցիալական կողմերը, որի ֆոնին համադրել է արդի տեսություններն ու մեթոդները: Հեղինակը առանձնակի ուշադրություն է դարձնում լեզվի յուրացման գործընթացի սուբյեկտին՝ պայմանավորելով լեզուն սովորողի անհատականությամբ, նրա ցուցաբերած դիրքորոշմամբ, սոցիալական խավի ու էթնոմշակութային պատկանելությամբ, մայրենի և ուսումնասիրվող լեզվի միջև առկա նմանություններով ու տարբերություններով: Այս առումով նա առանձնացնում է ժամանակակից այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են մայրենի և ուսուցանվող օտար լեզուների միջև զուգահեռներ անցկացնելու, կամային ընթերցանության, լեզվամշակման, լեզվական փոխակերպման ու ներդրման մեթոդները, որոնց ճիշտ կիրարկմամբ, ինչպես պնդում է ատենախոսը, ավելի է զարգացվում օտար լեզու ուսումնասիրողի բառապաշարը, քերականական գիտելիքներն ու գրավոր հմտությունները:

Ատենախոսական աշխատանքում օգտագործված է հարուստ և ակտուալ գրականություն: Իսկ հոգելեզվաբանության վերաբերյալ օգտագործված գրականությունը բավականին ընդգրկուն է: Այն ներառում է հարցեր, որոնք առընչվում են լեզվամշակմանը, լեզվաարտադրման մեխանիզմների հոգեբանական կողմին (ընթերցանություն, գրավոր, խոսակցական ու լսողական հմտություններ և հիշողություն), բառապաշարին, դրանց որոնման ու պահպանման մեխանիզմներին (ինչպես են բառերը պահպանվում մտքում և հետագայում մտաբերվում), լեզվի ձեռքբերմանը (ինչպես է երեխան ճանաչում լեզուն), մտքի և լեզվի փոխկապակցվածությանը, ներքին խոսքի դերակատարությանը, օտար լեզվի տիրապետմանը և այլն: Այս համայնապատկերին նոր լույսով են ներկայանում խոսքային մոդելների բնույթն ու մատուցման միջոցները, ինչպես նաև օտար լեզվի ուսումնառության ընթացքում ժամանակակից փորձարարական մեթոդները՝ իրենց առավելություններով ու թերություններով:

Աշխատանքը աչքի է ընկնում նորարարական և ոչ ստանդարտ մոտեցումներով: Կատարված է տեսական համապարփակ վերլուծություն:

Ատենախոսը քննադատական անդրադարձ է կատարել թեմային առընչվող հիմնարար դրույթներին ու տեսություններին: Գրագետ և իրազեկ մեթոդաբանական մոտեցում է ցուցաբերված թե՛ լեզվաբանական հարցերին, թե՛ լեզվամտածողության սոցիալ-հոգեբանական ու մշակութային կողմերին և թե՛ խոսքային հաղորդակցության առանձնահատկություններին:

Ատենախոսական աշխատանքի թե՛ տեսական, թե՛ փորձարարական մասերում բերված «կենդանի» օրինակները է՛լ ավելի իմաստալից շունչ են հաղորդում թեմատիկ բովանդակությանը՝ ևս մեկ անգամ հաստատելով սույն հետազոտության արդիականությունն ու կարևորությունը: Առանձնակի արժեքավոր են ատենախոսի դասավանդման պրակտիկայից և փորձառությունից բխող բազմաթիվ օրինակները, որոնք անմիջականորեն արտացոլում են օտար լեզվի ուսուցանման մեթոդական նրբերանգներն ու դասավանդման եղանակները: Ավելին՝ դրա շնորհիվ ատենախոսական աշխատանքը ձեռք է բերում ինքնատիպ մի ոճ, որն ի ցույց է դնում տեսության և պրակտիկայի միասնական էությունը:

Այստեղ հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ատենախոսության հեղինակը օտար լեզվի (անգլերենի) դասավանդման սեփական փորձերը հանգամանալից վերլուծում է լեզվամտածողությամբ ու մշակույթով խիստ տարբերվող, բավականին բարդ ու բազմազան արաբալեզու կոնտինգենտի օրինակներով: Սա է՛լ ավելի է արժևորում սույն աշխատությունը: Իսկ հեղինակին պատիվ է բերում նաև այն հանգամանքը, որ նա իր դիտարկումներն ու լուսաբանումներն անում է՝ լինելով միաժամանակ և՛ օտար լեզվի մասնագետ և՛ հոգեբան-հետազոտող:

Ի դեպ, օտար լեզուների դասավանդման միջազգային փորձի փոխանակման տեսանկյունից այս աշխատության հրապարակումը հաջողված նյութ կարող է դառնալ ինչպես դասավանդողների, այնպես էլ կրթության կազմակերպիչ-մասնագետների համար:

Կատարված է ծավալուն և հետաքրքիր հետազոտություն: Սակայն աշխատանքում նկատվել են որոշ բացթողումներ, որոնք որոշակի հարցերի տեղիք են տալիս:

1. Սեղմագրում զետեղված ուսումնասիրության առարկայի և վարկածի ձևակերպումները փոքր-ինչ տարբերվում են բուն ատենախոսական աշխատանքում ներկայացվող ձևակերպումներից:
2. Պարզ չէ, թե ինչու՞ է 47-րդ էջում առաջին դեմքով նկարագրված փորձին հղում տրվել այլ հեղինակների (թիվ 48 հղումով):
3. Ատենախոսը կարծիք է հայտնում այն մասին, որ «ներքին խոսքը զուրկ է հույզերից, հուզական երանգներից...» (էջ 67) , սակայն հետագա տեքստում չենք հանդիպում դրա վերաբերյալ որևէ պարզաբանման կամ հիմնավորման:
4. Երրորդ գլխում (էջ 95) հեղինակը կարծիք է հայտնում, ըստ որի «...դրդապատճառը, մինչև օրս քննարկված իր բոլոր տեսակներով ու տիպերով, կարելի է սովորել ու սովորեցնել»: Անհրաժեշտ է պարզաբանել միտքը, քանի որ հաջորդիվ բերվող հիմնավորումը վերաբերում է ոչ թե դրդապատճառ սովորելուն կամ սովորեցնելուն, այլ մոտիվացիայի փոփոխական բնույթին:
5. Հետազոտությունում կիրառվել են ատենախոսի կողմից մշակված «դրդապատճառը չափող հարցարան» (նշված է օր.՝ էջ 95-ում) և «ուսումնական տագնապը չափող հարցաթերթ» (նշված է օր.՝ էջ 96): Արդյո՞ք մեթոդիկաներն անցել են պատշաճ փորձաքննություն:
6. Հետազոտական վերլուծություններում ատենախոսը առավելապես հիմնվում է իր սեփական պրակտիկայի և տվյալ ասպարեզում լայնորեն ընդունված փորձի վերլուծությունների վրա (ինչը նույնպես արժեքավոր է), սակայն դրանից որոշակիորեն տուժում են օբյեկտիվ գիտական փաստերի վրա հենված հիմնավորումները:
7. 3.2 ենթագլխում նկարագրված լրագրերի կամ ամսագրերի, հանդեսների ու փոքրիկ ակնարկների (essay) տարբերակով դիրքորոշումների ու վերաբերմունքի ուսումնասիրության եղանակը թեև ինքնատիպ մոտեցում է, սակայն կարելի էր բավարարվել դրանց բովանդակությունը նկարագրող միայն 2-3 օրինակով՝ տեքստային ավելորդ ծանրաբեռնումից խուսափելու համար:
8. Հստակության և կոնկրետության առումով առավել նպատակահարմար կլիներ, եթե ատենախոսության եզրակացությունները տարանջատվեին խորհուրդներից ու հանձնարարականներից:

9. Ըստ ատենախոսական աշխատանքի նպատակի՝ արդյունքում պետք է ստեղծվեր հոգելեզվաբանական մոդել: Նպատակահարմար է, որ ավելի կոնկրետ և հստակ ներկայացվի այդ մոդելը:
10. Ատենախոսության մեջ բացատրական նկարների բովանդակությունները պետք է լինեն հայերեն, մինչդեռ այս աշխատանքում տեղ գտած շատ պատկերներ տրված են անգլերեն բովանդակություններով:

Թերությունների և բացթողումների վերաբերյալ վերոնշյալ դիտողությունները չեն արժեզրկում կատարված աշխատանքը, այլ յուրահատուկ կերպով հուշում են հետագա աշխատանքներում համապատասխան անդրադարձերի մասին, և բացասաբար չեն անդրադառնում ատենախոսական աշխատանքի նշանակության վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Գուրգենի Մելիքյանի «ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» թեմայով ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքը արդիական, ինքնուրույն, ամբողջական, ավարտուն գիտական աշխատանք է, ունի գիտագործնական արժեք:

Օգտագործված գրականությունն ու տեղեկատվական աղբյուրները համահունչ են թեմային: Թեմայի վերաբերյալ հրատարակված գիտական աշխատանքները արտացոլում են ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն ու գաղափարները:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին և արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը:

Ատենախոսական աշխատանքը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտության թվանիշին: Իսկ հայցորդը արժանի է ԺԹ.00.03 ծածկագրով մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս,

ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի,

ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ,

հոգ. գիտ. թեկն.՝ _____ *Հ. Ռ. Հովհաննիսյան*

Ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտ. քարտուղար _____ *Մ. Վ. Հովհաննիսյան*

«14», ապրիլ, 2022 թ.